

ՀԱՍՏԱՏՈՒՄԵՄ՝**«Սեյսմանախազիծ» ՍՊԸ տնօրեն՝**_____ **Ռ. Հայրապետյան**“ _____ ” _____ **2015թ.****ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ****ՀՀ Լոռու մարզի Լորուտ գյուղի մանկապարտեզի տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման վերաբերյալ**

Սույն եզրակացությունը տրվում է համաձայն ԱՌՆԱՊ հիմնադրամի և «Սեյսմանախազիծ» ՍՊԸ միջև 01.12.2015թ. կնքված թիվ ԱՍ-01/15 պայմանագրի: Եզրակացություն տալու նպատակով «Սեյսմանախազիծ» ՍՊԸ կողմից (Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության Պետ. լիցենզիա N13374 տրված 08.09.2009թ.) կատարվել է ՀՀ Լոռու մարզի Լորուտ համայնքի մանկապարտեզի (այսուհետ շենք) ակնադիտական հետազննություն, չափագրման և լուսանկարման աշխատանքներ:

Շենքի ծավալահատկագծային և կոնստրուկտիվ լուծումները

ՀՀ Լոռու մարզի Լորուտ համայնքի մանկապարտեզը կառուցվել է 1960-ական թվականին, տեղադրված է մեծ թեքությամբ տեղանքում (տես նկ. 1), մի հատվածամասում առկա է կիսանկուղ: Մանկապարտեզի շենքն ունի 13.1x27.4մ արտաքին եզրաչափերի ուղղանկյունաձև հատակագիծ: Կիսանկուղային հարկի բարձրությունը 2.8մ է (հարկի բարձրություն է դիտվել հատակից հատակ բարձրությունը), իսկ առաջին հարկինը՝ 3.4մ: Տանիքը քառալանջ է՝ արտաքին անկազմակերպ ջրահեռացմամբ:

Լորուտ համայնքի մանկապարտեզի կոնստրուկտիվ համակարգի լուծումը տրված է քարե շարվածքի կրող և կապող երկայնական ու լայնական պատերով և միջհարկային ծածկի ու վերնածածկի հորիզոնական կոշտ սկավառակներով:

Շենքերի կոնստրուկտիվ տարրերն ունեն հետևյալ բնութագրերը.

- Հիմքերը ժապավենային են, իրականացվել են խամքարաբետոնով:
- Պատերն իրականացվել են տուֆաքարերի կանոնավոր ձևի շարվածքով, կրացեմենտավազային շաղախի կիրառմամբ և ունեն 40-50սմ հաստություն: Պատերը դրսի կողմից սվաղված ենցեմենտավազային շաղախով:
- Բարավորներն իրականացվել են միաձույլ ե/բ-ով:
- Ծածկն ու վերնածածկն իրականացվել են հավաքովի ե/բ կլորանցքավոր սալերով:
- Միջնորմներն իրականացվել են պեմզաբետոնե բլոկների և մասամբ սալիկների շարվածքով:
- Տանիքը լանջավոր է՝ արտաքին անկազմակերպ ջրահեռացմամբ: Իրականացված է փայտյա ծափղնային ու կավարամածային կոնստրուկցիաներով և ծածկված մետաղական ալիքավոր թերթերով:
- Սալվածքն ասֆալտաբետոնից է:



Նկ. 1 Շենքի ճակատների տեսքեր

Հեղազնության արդյունքում պարզվել է.

1. Քանի որ ՀՀ Լոռու մարզի Լորուտ համայնքի մանկապարտեզի շենքը կառուցվել է 1960-ական թվականներին, մինչև Սպիտակի 1988թ. ավերիչ երկրաշարժը, ուստի ակնհայտ է, որ շենքի փաստացի ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներում կան անհամապատասխանություններ Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» ՀՀՇՆ II-6.02-2006 շիննորմերի պահանջների հետ: Դրանք են.

• Ըստ սեյսմիկ ուժերի դիմադրողականության շենքի պատերի քարաշարվածքի փաստացի կոնստրուկտիվ լուծումները չեն համապատասխանում նորմերի 7.9.3 կետի աղյուսակ 12-ով նախատեսված շարվածքի կոնստրուկտիվ լուծումներից (տիպերից) և ոչ մեկին:

• Չիբավարարված 7.4.9 կետիայնպահանջը, որքարեշենքերումհիմքերիխամքարաշարվածքիհամարթույլատրվումէկիրառելճեղքված քար՝ պատերիկցորդումները, փոխհատումներըպողպատեցանցերովըստբարձրության 60սմմեկամրանավորելու, և 50 տեսականիշիցոչցածրշաղախկիրառելուպայմանով:

• Կանմիջնապատեր, որոնցլայնությանևկիցբացվածքիլայնությանհարաբերությունըավելիփոքրէ, քաննորմերիաղյուսակ 14 կետովնախատեսվածթույլատրելիևվազագույն 0.8 արժեքը,

• Ծածկերիսալերիմիջևկարաններըչենլցրելմանրահատիկբետոնովկամցեմենտայինուպոլիմերցեմենտայինշաղախով, ինչպեսնախատեսվածէնորմերի 7.5. կետով, ինչիհետևանքովչիապահովվելիավաքովիե/բծածկերիմիածուլությունը, ուստիծածկերըչենկարողճառայելորպեսհորիզոնականհարթությանմեջկոշտևմիածուլսկավառակներևչենկարողապահովելկրողուղաձիգկոնստրուկցիաներիհամատեղաշխատանքըերկրաշարժայինազդեցություններիժամանակ:

• Միջնորմներիամրակապումըկրողկոնստրուկցիաներիհետչիբավարարումնորմերի 7.6. կետովնախատեսվածպահանջներին, ևապահովվածչէնրանցկայունությունըուղղաձիգհարթությունիցդուրս:

2. ՀՀ Լոռու մարզի Լորուտ համայնքի մանկապարտեզիակնադիտականհետազննությանարդյունքումպարզվելէ, որշենքի կոնստրուկտիվ տարրերում կան հետևյալ վնասվածքներն ու թերությունները.

• Պատերի քարաշարվածքում կան վնասվածքներ: Պատերի քարաշարվածքում կան մինչև 10մմ բացվածքի լայնությամբ ուղղաձիգ և թեք միջանցիկ ճաքեր, որոնք ունեն նստվածքային բնույթ: Պատերի պատվանդանային մասերը և հատակից մոտ 0.5մ բարձրությամբ հատվածները գտնվում են թույլ խոնավացած վիճակում(տես նկ. 2):

• Տեղիենունեցելվերնածածկիհավաքովիե/բսալերիմիմյանցնկատմամբմինչև7մմ տեղաշարժեր, ինչըզգալիճաքերիտեսքովարտահայտվելէսալերիմիջևկարաններիառաստաղիսվաղին

(տես նկ. 3): Ծածկերի սալերի տեղաշարժերն առաջացել են Սպիտակ հավերի չերկրաշարժի հետևանքով:

• Շենքի տանիքի ծածկույթը գտնվել է անբավարար վիճակում, ինչի հետևանքով մթնոլորտային տեղումների ջրերը պարբերաբար ներթափանցել են շենքի կոնստրուկտիվ տարրեր և առաջացրել զգալի վնասվածքներ (տես նկ. 4): Շահագործման ընթացքում շենքի տանիքածածկույթը վերանորոգվել է:

• Միջնորմներում կան մինչև 10մմ բացվածքի լայնությամբ տարբեր ուղղությունների միջանցիկ ճաքեր: Միջնորմների ամրակապումը կրող կոնստրուկցիաների հետ անբավարար է, իսկ դրանց միացման կարանների սվաղի վրա առկա են մինչև 6մմ բացվածքի լայնությամբ ճաքեր (տես նկ. 5):

• Հատակների մեծ մասի տեխնիկական վիճակն անբավարար է (տես նկ. 6):

• Ջրագծերի և կոյուղու ներքին ցանցի տեխնիկական վիճակն անբավարար է, իսկ որոշ հատվածամասերում վթարային:

• Շենքի ներքին հարդարանքն ունի ֆիզիկական ու բարոյական զգալի մաշվածություն (տես նկ. 3; 4; 5):

• Շենքի սալվածքը գտնվում է անբավարար վիճակում, տեղ-տեղ խոտաբույսեր են աճել, ինչի հետևանքով մթնոլորտային տեղումների ու մակերևույթային ջրերը ներթափանցում են շենքի կոնստրուկտիվ տարրերն ու հիմնատակ (տես նկ. 7):



Նկ. 2 Պատերի քարաշարվածքի վնասվածքների և ճաքերի տեսքեր



Նկ. 3 Միջհարկային ծածկերի ու վերնածածկի հավաքովի/բալերի վնասվածքի տեսքեր



Նկ.

4 Տանիքի ցնցեր թափանցած խոլորտային տեղումների ազդեցության հետևանքով վնասվածքների տեսքեր



Նկ. 5 Միջնորմերի վնասվածքների հնարքերի տեսքեր



Նկ. 6 Հատակների, դռների ու պատուհանների վնասվածքների տեսքեր



Նկ. 7 Սավաձքի անբավարար վիճակի տեսքեր

Հիմնվելով հետազննության արդյունքներին եզրակացնում ենք.

1. Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կողմից 08.12.2009թ. թիվ 282-Ն հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության մեթոդական ցուցումների» ՀՀ Լոռու մարզի Լորուտ համայնքի մանկապարտեզի շենքի տեխնիկական վիճակը գնահատվում է անբավարար (վնասվածության աստիճանը՝ 3-րդ աստիճան), այն է՝ կոնստրուկտիվ տարրերի շահագործումը հնարավոր է միայն կապիտալ նորոգումից հետո:

2. Համաձայն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի առ 23.10.2014թ. թիվ 957-Ա հրամանով հաստատված «Շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության մակարդակի (աստիճանի) գնահատման մեթոդական ցուցումների», Լորուտ համայնքի մանկապարտեզի շենքի սեյսմիկ խոցելիության մակարդակը (շենքի վարքը երկրաշարժի դեպքում) գնահատվում է բարձր, այն է՝ երբ օբյեկտի տարածքում մինչև 8 բալլ ըստ MSK-64 սանդղակի (գետնի սպասվելիք առավելագույն արագացումը $A_{max}=0.2g$)

հնարավոր երկրաշարժի ժամանակ շենքի կոնստրուկցիաներում կարող են առաջանալ լուծեղված վնասվածքներ՝ վնասվածքի աստիճանը 4-րդ համաձայն ՀՀ ՇՆ II-6.02-2006 նորմերի 24 աղյուսակի:

3. Ելնելով ՀՀ Լոռու մարզի Լորուտ համայնքի մանկապարտեզի շենքի ծավալահատակագծային ու կոնստրուկտիվ լուծումներից, շենքի փաստացի

տեխնիկական վիճակից, վնասվածության աստիճանից ու սեյսմիկ խոցելիության մակարդակից գտնում ենք, որ շենքի սեյսմազինվածության բարձրացման և վերակառուցման աշխատանքների ծախսերը կգերազանցեն համապատասխան տեխնիկատնտեսական արդարացված ծախսերից, ուստի ավելի նպատակահարմար է շենքի ապամոնտաժումը և նորի կառուցումը: Հակառակ դեպքում այդ շենքը հնարավոր չէ շահագործել նույն գործառնական նշանակության նպատակով, քանի որ տարածաշրջանի հնարավոր ուժեղ երկրաշարժի ժամանակ շենքը կփլուզվի, որը կբերի մարդկային զոհերի և նյութական վնասների:

Կատարող՝
գլխավոր ճարտարագետ,
տեխնիկական գիտությունների թեկնածու,
ԳՄԱ ԷԿԱ թղթակից անդամ՝

Զ. Խլղաթյան